



Բ.— ԱԶԳ. ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ ԱԶԻԶԻՅԷԻ

Հալէպի Հայոց երկրորդ Ազգ. Գերեզմանատունը կը գտնուի քաղաքին հիւս. արեւմտեան կողմը, գրեթէ բոլորովին քրիստոնեայ Ազիզիյէ թաղին մէջ և մաս կը կազմէ ընդհանուր քրիստոնէից գերեզմանատան:

Մինչդեռ, ամէն տեղ, քրիստոնեայ հասարակութեանց գերեզմանոցները կը ներկայացնեն անշատ անշատ թաղամասեր, և իրարմէ բաժնուած են քարապատով կամ ցանկապատով, Հալէպինը այդպէս չէ՛ սակայն. ան կը ներկայացընէ երեք անշատ մասեր, որոնց իւրաքանչիւրին մէջ 8 — 9 քրիստոնեայ

հասարակութիւններ ունին իրենց մեռելացիները, խառն ի խառն, առանց որչ քաժանութի, և հինէն ի վեր գրութիւնը այս եղամ է գրծախտաբար, որ ի վերջոյ յանգամ է դառի, ճշգեղու համար իւրաքանչիւր հասարակութեան հողային իւրաւունքը, իր սահմանին մէջ:

Այս հասարակաց գերեզմանատունը, իր երեք անշատ մասերով, որոնք կանոնաւորապէս որմափակուած են, և ունին լայնանիստ, բարձր երկաթեայ դուռներ, ըսկըզրնական շրջանին սեղանականու-